շուն, կաշին հանում են և կուպրի փոխարէն դարսում նաւերում։ Այս տեղ շատ վայրենի այծեր կան, և այդպիսի քանակութեամբ ուրիշ ոչ մի կողմում չկայ։

Մի ուրիշ տեղ ասում է

Ծնրակ 6.—Բագուայ նկարագրութիւնը. Դա քարից շինած քաղաք է Խազարեան ծովի ափում՝ Դերբէնտի շրջանում՝ Շիրուանի մօտ։ Ծովի ջուրը շփում է քաղաքի պատերին և աշտարակին, դորա հողը պինդ քար է, օդը այս տեղ լաւ է, ջուրը պարզ, վճիտ, դորա մասին արդէն ասուած էր, մեծ մասամբ ջրհորներից, կայ և աղբիւր։

Խամդուլլա Ղազվինացին թուելով Ադրբէջանի շրջանները կամ թումանները (տասն հազարի) և նկարագրելով Նախիջեւանի թումանը, ասում է, որ նա բաղկացած է հինգ քաղաքից, դոցանից վերջինն է Բագուէ. «դա է մի բերդ քարի ճեղքուածի մէջ, իսկ գիւղը դասնվում է բերդի տակ, այնպէս որ մինչեւ կէս օր սարը պահպանում է գիւղը արեւից։ Այս տեղ է ապրում հոգեւոր գլուխը (քրիստոնեաների) Ղերջանեա[1])»։ Ընդհանրապէս արեւելեան պատմագիրները Բագուայ մասին, բոլորը միասին աւելի քիչ տեղեկութիւն են տալիս, քան ինքը միայն Բագուվինը։

Եւ այդպիսով Բագու քաղաքի հիմնուելը կարելի է հաշուել այն ժամանակուանից, երբ սկսուեց արաբացոց գերիշխանութիւնը Դաղստանում, կամ թէ մի քիչ վաղ։ Արաբացոց ժամանակ Բագուն երեւի կազմում էր չորս գաւառական քաղաքներից մէկը։

Դերբենդնամէն ասում է որ Մօտամէդ խալիֆը 272 (885—886) թուին առանձին շրջաբերականով Բագուայ աղահանքերից և նաւթից ստացուած արդիւնքները յատկացրեց Դերբէնդի բնակչաց և դորա համար նշանակուած էր վերահսկող Մուհամմէդ իբն Ամմար, որը ամենայն տարի եկամուտը բաժանում էր Դերբէնտի զինուորներին։

Իւր աշխարհագրական դիրքով Բագուն կապուած լինելով Շիրվանի հետ և օգուտներով, բնականաբար պէտք է բաժանէր

[1])Անհամականալի են թումանները և ղերջանեայն։